



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N^o-06Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13 ԹԻՎ 07Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատական ծառայության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի
Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի
2006 թվականի նոյեմբերի 13-ի «Դատական ծառայության պաշտոնների
անվանացանկը և հաստիքների քանակը հաստատելու մասին» թիվ 07Ն որոշման
1-ին կետով հաստատված «Դատական ծառայության պաշտոնների անվանացանկը
և հաստիքների քանակը» հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ
փոփոխությունները և լրացումները.

1. Հավելվածի 164-րդ կետի «Հաստիքների քանակը» սյունակում «3» թիվը
փոխարինել «2» թվով.

2. Հավելվածը լրացնել նոր «203.1» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

230.1	Համակարգչային ծառայության կրտսեր մասնագետ	կրտսեր, 2-րդ	1
-------	--	--------------	---

3. Հավելվածը լրացնել նոր «230.2» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

230.2	Կադրերի բաժնի գործավար	կրտսեր, 2-րդ	1
-------	------------------------	--------------	---

4. Հավելվածի 253-րդ կետի «Հաստիքների քանակը» սյունակում «11» թիվը փոխարինել «10» թվով.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

2007թ. հուլիսի 30
ք.Երևան